



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐ

N 01/25.1/18568-17

«16» 10. 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաբլոյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Ելք» խմբակցության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված հարցապնդման պատասխանը՝ ըստ հարցերի հերթականության:

1. Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» միջազգային օդանավակայաններից իրականացվող կանոնավոր չվերթների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված հարցին ի պատասխան՝ կցվում են «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների 2017 թվականի հոկտեմբեր ամսվա չվացուցակները: Նշենք, որ չվացուցակները կարող են փոփոխվել՝ կախված ավիաընկերությունների կողից երթուղիների սպասարկման գրաֆիկների փոփոխություններից:

2. Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայանից իրականացվող կանոնավոր չվերթների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Վրաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչության պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հասցեով.


<http://gcaa.ge/eng/tbilisiout.php>



Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (37410) 59 00 01, էլ. փոստ՝ minister@mtcit.am

3. Մի շարք ուղղություններով Երևանից և Թբիլիսիից ավիատոմսերի սակագների հետ կապված հայտնում ենք, որ ավիատոմսերի վաճառքը ճկուն գործընթաց է և յուրաքանչյուր չվերթի համար տվյալ պահին առաջարկվող սակագինը կախված է վաճառքի ընթացքից, տվյալ պահին էկոնոմ կարգի ավիատոմսի վաճառքի համար բաց դասից կամ ենթադասերից: Հետևաբար՝ օրերի կամ ժամերի տարբերությամբ կատարված վերլուծությունների արդյունքները կարող են խիստ տարբերվել: Նշենք նաև, որ Երևանից և Թբիլիսիից ավիատոմսերի սակագների համեմատական վերլուծություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ երթուղին սպասարկող ավիաընկերության տեսակը (դասական, թե բյուջետային), օդանավում մատուցվող ծառայությունները, տարանցիկ չվերթների դեպքում՝ տարանցման կետում սպասելաժամանակը և այլ գործոններ, որոնք պետք է ևս համեմատական լինեն՝ շուկայում առկա իրավիճակին օբյեկտիվ գնահատական տալու համար:

4. Ստորև ներկայացնում ենք հարցման մեջ նշված ուղղություններից պատահականության սկզբունքով ընտրված Վիլնյուս ուղղությամբ Երևանից և Թբիլիսիից գործող սակագների տատանումը 2017 թվականի սեպտեմբերի 19-ից 30 ընկած ժամանակահատվածում.



5. «Զվարթնոց և «Շիրակ» միջազգային օդանավակայանների սակագները հրապարակված են «Արմենիա Միջազգային Օդանավակայաններ ՓԲԸ պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հասցեով



<http://zvarnots.aero/en/charges-tariffs>: Համապատասխան էջ մուտք գործելու համար խնդրում ենք «օգտվողի անուն» դաշտում հավաքել «EVN», իսկ «գաղտնաբառ դաշտում»՝ «aia-2015»:

6. Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայանում գործող օդանավակայանային սակագների հետ կապված հայտնում ենք, որ տվյալ տեղեկատվությունը հրապարակային աղբյուրներում հասանելի չէ:

7. Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայաններում ավիապառելիքի սակագինը տատանվում է՝ ի պատասխան միջազգային շուկաներում նավթի գործող սակագների տատանումների, ինչպես նաև դրա մեկ տոննայի արժեքին գումարվում են փոխադրման և այլ հավելյալ ծախսեր: Այսպես՝ «Արմենիա Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի սեպտեմբերի 28-ի դրությամբ Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայաններում մեկ տոննա ավիապառելիքի արժեքը կազմում է 841 ԱՄՆ դոլար:

8. Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայանում գործող ավիապառելիքի սակագները հրապարակված չեն:

Առդիր՝ 3 էջ:

Հարգանքով՝

Վահան Մարտիրոսյան

